գայ Աստուծոյ եւայլն։ Դրէ վեհապետութիւն Ձեր թէ մեր միաբանութիւն արգելում է քեզ վերադառնալ, ի աթոռս. ո՞չ գոքա էին ինձ յորդորողքն, և գրով երդվօղքն յանուն ահաւորին (Աստուծոյ). որ կայ առ իս երդման գիրն. յարաժամ ինձ խառնակիչ յիշեն և չուզո՞ղ են։

Գրէք թէ կոնդակ ուղարկեմ որ տեղիդ յաջորդ լինիս. Հինգ ամաց մէջն չորս յաջորդ էք փոխել. եթէ օրինաւոր տեղէ ընչո՞ւ չեն կացել որ յայժմ Թօփալիս կու Հրամայէք Ձեր բարձր սրբազնութիւն. նախ որ ծեր եմ, և երկրորդ որ Թօփալ, չունիմ կարողութիւն, ներես. այսպիսի ժողովրդոյն պարտ է գանչ (ժիր) կարգաւոր լինի և ոչ ինձանման. տեղոյս ժողովուրդն չունին կարօտութիւն յաջորդի որպէս լսեմ և այլն։ Գրէք թէ եթէ չկամիք յաջորդութիւն, կամիք մնալ այդ վանուց միաբան մինչեւ ց'ել շնչոյդ. չկարծես թէ այդի ելանելոցես. բարոք գրէք, բայց ի միտ առէք, ես իմ արարիչն եմ յուսացեալ. որ ազատեաց զօնայն (զՅօնան) ի փորոյ կիտին և Դանիէլ Կաթուղիկոսն ի մարաղու. յառաջեալն գրէ թէ՝ մի՛ տիրելով վիճակին, այլ լինիլ օրինակ Հօտին։ Ուրեմն եթէ ես անցաւոր եմ, այս ինձ ապաշխարանք է որ քաշեմ. եթէ անցաւոր չեմ, կարող է արարիչն ազատել զիս որպէս ազատեաց զերիս մանկունս ի միջոյ Հնոցին. և այլն։

Մնամ խոնար ծառա բարձր սրբազնութեան
ԹՕՓԱԼ ՍԻՄԷՕՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲՋՆՈՒՆԵԱՆՑ

№ 1

1835 թիվ. 23 մարտի

Ի վանս Սաղիանու։

Սուն գիր ձեռամբ Թղթաբերին ուղարկեցաք իւրն։

ՕՐԻՆԱԿ ԶԱՅՍ ԶՈՐ ԳՐԵՑԱՔ

Նորին Վեհաստիճանութեան Սրբազնագոյն Կաթուղիկոսի և Հայրապետի ամենայն Հայոց Տեառն Յովհաննու, և Ասպետի։

Ողորմած Հովւապետի։

Յայտ է ըստ բնական և քաղաքական իրաւանց և աստուա-